ՆՈՐ ԾՈՎԱՌՄԲՈՑ ՆԱՒՆ ՊՈԼԻՓԵՄ



Նոր ծովառմբոյ նաւն Պոլիփեմ, 'ի նաւագործարանին Զաղրմի։

Այս ծովառմբային հսկայաձև զրահաւոր նաւս, ներկայացեալ կրկին պատկերաք ի Բաղմավիպիս, դարուս յառաջադիմութեան աւերման հրաշալի գործի մ"է, անուանեալ Պոլիփեմ, որ արկաւ 'ի ծով ի նաւագործարանէն Զաղրմի 1881ին։

Այսոր ծրագիր յօրինողն է՝ նաւական չինութեանց ուղղին Պարնապի և նաւագործարանին չինողաց գլուխն Յոնտէրս՝ չինուածոյն առաջնորդ եղաւ։ Իրրև նաւական գործ՝ իր ամբողջութեամբն հրաշակերտ մ"է։

Նոր և տարօրինակ ձև մ"ունի։ Երբ-



Նոր ծովակռուոյ նաւն «Դուիլիօ» 'ի ծովն ։

կայն է 240 անգղիական ոտք, լայն՝ 40, և բարձր՝ 18 ոտք և $^{3}/_{4}$։ Թշնամւոյն դէմ պաշտպանելու համար, ամրացուցին զայն երկքէն մինչև վեց ըլթամատն բատուարութեամբ զրահով, և վնասն անագին գործելու համար նաւացռուկ մը դրին վրան, որ նաւուն մարմնէն 14 ոտք 'ի դուրս կ'երկըննայ։ Այս ահեղ յառաջակարկառ ցցուած գիրքէն կ'արձըկեն ծովառումբները, և ուրիշներ ալ կ'արձըկեն երկու իջանելիքներէն (écoutille)։ կամրջին վրայ կը բարձրանան վեց շրջող աշտարակունք, նորօրնֆէլդ դրութեամբ թնդանօթներով զինուած ։ Եթէ յանկարծ որ և իցէ դիպուածով նաւացռուկն խորտակի, նաւն կերպով մ'ալ վտանգի մէջ չիյնկնար, այլ և այլ մասանց բաժնուած ըլլալով ։

Այս երկաթէ զանգուածոյն՝ շարժումն կու տան իրեք պտուտակք 55000 ձիոց ուժով, որ կրնան տալ իրեն ժամուան մը մէջ 17 հանգուցի արագութիւն մը ։

Այս նաւս արժեց երկոտասան միլիոն ։

Ցիրտուի այս և ասոնց նըման ծովային բերդեր կառուցանելու ծախքն, իրաւ գտնուած ներկայ դրութեան մէջ, տէրութեանց համար անհրաժեշտ կարևորութիւն մ'է. սակայն և ընմոից այս պէտքն լրացընոցք են դարձեալ ժողովրդոց վրայ կրկին և կրկին ծանրացած տուրքերն ։

digitised by A.R.A.R.@